ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/16-1»

ք.Երևան «31» 10 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Բաբայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարիքների համար արտադրանքի շուկայում փորձարկման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և Գնացուցակի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և Գնացուցակին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և Գնացուցակին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. **Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 9 405 000 (ինը միլիոն չորս հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին և Գնացուցակին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝

պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 **Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	Ստանդարտների Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 49/4
Կառավարական տուն, 1	«Կոոպերատիվ բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/հ 247120046898000
Հ/հ 900011024339	ՀՎՀՀ 00081133
ՀՎՀՀ 02505554	Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Բաբայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«31» 10 2019 թ. կնքված
ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/16-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը/ ՀՀ դրամ***	ընդհանուր քանակը	Մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79311170/7	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի օկտանային թվի որոշում) օկտանային թիվը՝ որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 80% **130 փորձանմուշի փորձարկում** **1.Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման:** **2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:**	դրամ	4550000	1	ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը
2	79311170/8	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի ածխաջրածինների ծավալային մասի որոշում) արոմատիկ ածխաջրածինների ծավալային մասը՝ 35%-ից ոչ ավելի **50 փորձանմուշի փորձարկում** **1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման:** **2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:**	դրամ	90000	1	ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը
3	79311170/9	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի հագեցած գոլորշիների ճնշման որոշում) հագեցած գոլորշիների ճնշումը՝ ամառային շրջանում՝ 35-80 կՊա, իսկ ձմեռային շրջանում՝ 35-100 կՊա **30 փորձանմուշի փորձարկում** **1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման:** **2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:**	դրամ	60000	1	ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը

4	79311170/10	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի կապարի կոնցենտրացիա յի որոշում) չի թույատրվում կապարի կոնցենտրացիաներ 35 փորձանմուշի փորձարկում 1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:	դրամ	70000	1	ք. Երևան, մատակարարի նշված հասցեում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը
5	79311170/11	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի բենզոլի ծավալային մասի որոշում) 10 փորձանմուշի փորձարկում 1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:	դրամ	40000	1	ք. Երևան, մատակարարի նշված հասցեում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը
6	79311170/12	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի ծծմբի պարունակության որոշում) ծծմբի զանգվածային մասը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի 130 փորձանմուշի փորձարկում 1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:	դրամ	2730000	1	ք. Երևան, մատակարարի նշված հասցեում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը
9	79311170/15	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի ցետանային թվի որոշում) Ցետանային թիվը՝ ամառային դիզելային վառելիքի համար-51-ից ոչ պակաս, ձմեռային և արկտիկական դիզելային վառելիքի համար-47-ից ոչ պակաս 30 փորձանմուշի փորձարկում 1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:	դրամ	135000	1	ք. Երևան, մատակարարի նշված հասցեում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը
10	79311170/16	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի ծծմբի զանգվածային մասի որոշում) Ծծմբի զանգվածային մասը-10մգ/կգ-ից ոչ ավելի. 50 փորձանմուշի փորձարկում 1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման: 2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:	դրամ	1050000	1	ք. Երևան, մատակարարի նշված հասցեում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը

11	79311170/17	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի բռնկման ջերմաստիճանի որոշում) Բռնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում՝ ամառային և միջսեզոնային դիզելային վառելիքի համար- 55° C ոչ պակաս, ձմեռային և արկտիկական դիզելային վառելիքի համար- 30° C ոչ պակաս **50 փորձանմուշի փորձարկում** **1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման:** **2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:**	դրամ	500000	1	ք. Երևան, մատակարարի նշված հասցեում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը
12	79311170/18	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի ֆրակցիոն կազմի որոշում) Ֆրակցիոն կազմը՝ 95%-ը թորվում է ոչ ավել -360° C, **30 փորձանմուշի փորձարկում** **1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման:** **2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:**	դրամ	120000	1	ք. Երևան, մատակարարի նշված հասցեում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը
15	79311170/20	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի զտելիության սահմանային ջերմաստիճանի որոշում) Զտման սահմանային ջերմասրիճանը՝ ամառային դիզելային վառելիքի համար՝ -չի որոշվում, ձմեռային դիզելային վառելիքի համար՝ մինուս 20° C-ից ոչ բարձր արկտիկական դիզելային վառելիքի համար՝ մինուս 38° C-ից ոչ բարձր միջսեզոնային դիզելային վառելիքի համար՝ մինուս 15° C-ից ոչ բարձր **30 փորձանմուշի փորձարկում** **1. Փորձարկման լաբարատորյան պետք է լինի հավատարմագրված և նշանակված համաձայն հավատարմագրման մասին օրենքի և 2012թ սեպտեմբերի 6-ի կառավարության 1201-Ն որոշման:** **2.Փորձարկումների իրականացում համաձայն տեխնիկական կանոնակարգի կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկում ընդգրկված ստանդարտներին համապատասխան:**	դրամ	60000	1	ք. Երևան, մատակարարի նշված հասցեում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. Դեկտեմբերի 20-ը

* Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ փորձանմուշները Կատարողին ներկայացնելու օրվա և ժամի մասին: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի հետ համաձայնեցված ողջամիտ ժամկետում՝ կախված փորձանմուշների քանակից:

** Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց համաձայն Հավելված N 1.1-ով սահմանված մեկ փորձանմուշի արժեքի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024339
ՀԿՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ստանդարտների Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 49/4
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 2471200468980000
ՀԿՀՀ՝ 00081133
Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Բաբայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1
«31» 10 2019թ. կնքված
ՎԱՇՀՏՄ-ԳՀՇՁԲ-19/16-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՑՈՒՑԱԿ

ՀՀ	Մատուցվող ծառայության անվանումը	Մեկ փորձանմուշի արժեքը ՀՀ դրամ
1	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի օկտանային թվի որոշում) օկտանային թիվը՝ որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 80% **130 փորձանմուշի փորձարկում**	35000
2	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի ածխաջրածինների ծավալային մասի որոշում) արոմատիկ ածխաջրածինների ծավալային մասը՝ 35%-ից ոչ ավելի **50 փորձանմուշի փորձարկում**	1800
3	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի հագեցած գոլորշիների ճնշման որոշում) հագեցած գոլորշիների ճնշումը՝ ամառային շրջանում՝ 35-80 կՊա, իսկ ձմեռային շրջանում՝ 35-100 կՊա **30 փորձանմուշի փորձարկում**	2000
4	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի կապարի կոնցենտրացիա չի որոշում) չի թույատրվում կապարի կոնցենտրացիաներ **35 փորձանմուշի փորձարկում**	2000
5	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի բենզոլի ծավալային մասի որոշում) **10 փորձանմուշի փորձարկում**	4000
6	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի ծծմբի պարունակության որոշում) ծծմբի զանգվածային մասը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի **130 փորձանմուշի փորձարկում**	21000
9	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի ցետանային թվի որոշում) Ցետանային թիվը՝ ամառային դիզելային վառելիքի համար-51-ից ոչ պակաս, ձմեռային և արկտիկական դիզելային վառելիքի համար-47-ից ոչ պակաս **30 փորձանմուշի փորձարկում**	4500
10	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի ծծմբի զանգվածային մասի որոշում) Ծծմբի զանգվածային մասը-10մգ/կգ-ից ոչ ավելի, **50 փորձանմուշի փորձարկում**	21000
11	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի բռնկման ջերմաստիճանի որոշում) Բռնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում՝ ամառային և միջսեզոնային դիզելային վառելիքի համար-55° C ոչ պակաս, ձմեռային և արկտիկական դիզելային վառելիքի համար-30° C ոչ պակաս **50 փորձանմուշի փորձարկում**	10000
12	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի ֆրակցիոն կազմի որոշում) Ֆրակցիոն կազմը՝ 95%-ը թորվում է ոչ ավել -360° C, **30 փորձանմուշի փորձարկում**	4000
15	շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի զտելիության սահմանային ջերմաստիճանի որոշում) Զտման սահմանային ջերմասլիճանը՝ ամառային դիզելային վառելիքի համար՝ -չի որոշվում, ձմեռային դիզելային վառելիքի համար՝ մինուս 20° C-ից ոչ բարձր արկտիկական դիզելային վառելիքի համար՝ մինուս 38° C-ից ոչ բարձր միջսեզոնային դիզելային վառելիքի համար՝ մինուս 15° C-ից ոչ բարձր **30 փորձանմուշի փորձարկում**	2000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024339
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ստանդարտների Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 49/4
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 2471200468980000
ՀՎՀՀ 00081133
Տնօրենի պաշտոնակատար, Ա. Բաբայան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«31» 10 2019 թ. կնքված
ԿԱՇԿՏՄ-ԳՀԾՁԲ-19/16-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79311170/7	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի օկտանային թվի որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	4550000	4550000	4550000	4550000
2	79311170/8	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի ածխաջրածինների ծավալային մասի որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	90000	90000	90000	90000
3	79311170/9	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի հագեցած գոլորշիների ճնշման որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	60000	60000	60000	60000
4	79311170/10	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի կապարի կոնցենտրացիա յի որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	70000	70000	70000	70000
5	79311170/11	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի բենզոլի ծավալային մասի որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	40000	40000	40000	40000
6	79311170/12	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (բենզինի ծծմբի պարունակության որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	2730000	2730000	2730000	2730000

9	79311170/15	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի ցետանային թվի որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	135000	135000	135000	135000
10	79311170/16	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի ծծմբի զանգվածային մասի որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	1050000	1050000	1050000	1050000
11	79311170/17	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի բռնկման ջերմաստիճանի որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	500000	500000	500000	500000
12	79311170/18	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի ֆրակցիոն կազմի որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	120000	120000	120000	120000
15	79311170/20	Շուկայում ապրանքի փորձարկման ծառայություններ (դիզելային վառելիքի զտելիության սահմանային ջերմաստիճանի որոշում)	0	0	0	0	0	0	0	0	0	60000	60000	60000	60000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024339
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ստանդարտների Ազգային Ինստիտուտ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 49/4
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 2471200468980000
ՀՎՀՀ 00081133
Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Բաբայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«31» 10 2019 թ. կնքված
ՎԱՇՎՏՄ-ԳՀԾՁԲ-19/16-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«31» 10 2019 թ. կնքված
ԿԱՇԿՏՄ-ԳՀԾՁԲ-19/16-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն